Հաստատված է
ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի
«15» դեկտեմբերի 2021 թ. թիվ 163 նիստում
ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրեն
_____Ա. Սարգսյան

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

(Նոր խմբագրությամբ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կանոնակարգը սահմանում է ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի (այսուհետ՝ Կենտրոն) գիտական խորհրդի կազմի ձևավորման, նիստերի նախապատրաստման և աշխատանքի կարգը:

1.2. Կենտրոնի գիտական խորհրդի կանոնակարգը հաստատում է ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհուրդը:

1.3. Կենտրոնի գիտական խորհրդի կանոնակարգի մեջ փոփոխությունները և լրացումները կատարվում են նույն կարգով:

2. ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

2.1. Կենտրոնի գիտական խորհուրդը տնօրենի նախագահությամբ գործող գիտական և գիտատեխնիկական գործունեությունը համակարգող կոլեգիալ կառավարման մարմին է:

2.2. Գիտական խորհրդի լիազորությունների ժամկետը հինգ տարի է:

2.3. Կենտրոնի գիտական խորհուրդը

1) հաստատում է իր կանոնակարգը,
2) մշակում է Կենտրոնի ուսանողների ավարտական որակավորման պայմանները, մագիստրատուրայի, ասպիրանտուրայի, դոկտորանտուրայի, հայցորդության ընդունելության և ուսուցման կանոնները,
3) Կենտրոնին վերապահված ընդունելության անվճար ուսուցման տեղերից դուրս, տնօրենի ներկայացմամբ հաստատում է վճարովի հիմունքներով ըստ մասնագիտությունների ընդունելության տեղերը՝ օրենսդրությամբ սահմանված կարգին համապատասխան,
4) տնօրենի ներկայացմամբ որոշում է ստեղծել, վերակազմակերպել, լուծարել ֆակուլտետներ, ամբիոններ, կառուցվածքային այլ ստորաբաժանումներ,
5) տնօրենի ներկայացմամբ հաստատում է Կենտրոնի կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները, կանոնակարգերը, ներքին կարգապահական կանոնները, գիտական աշխատողների պաշտոնների զբաղեցման մրցութային կարգը, ներքին նորմատիվ այլ ակտեր,
6) քննարկում է Կենտրոնի մասնագիտությունների ու մասնագիտացումների անվանացանկերը,
7) քննարկում և հաստատում է կրթական ծրագրերը, ըստ մասնագիտությունների սահմանում է վճարաչափերը,
8) քննարկում է գիտական գործունեության գլխավոր և հեռանկարային ուղղությունները, լսում գիտական հաղորդումներ Կենտրոնում կատարվող կարևորագույն գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների արդյունքների մասին,
9) քննարկում և հաստատում է հիմնարկի գիտական կադրերի պատրաստման, գիտական հետազոտությունների, միջազգային գիտական համագործակցության հարցերը,
10) քննարկում և հրատարակության է երաշխավորում հիմնարկի աշխատակիցների մենագրությունները, ժողովածուները և այլն,

11) առնվազն տարին մեկ անգամ քննարկում և հաստատում է տնօրենի և ստորաբաժանումների ղեկավարների հաշվետվություններն ու առաջարկությունները հիմնարկի գիտակրթական գործունեության վերաբերյալ,
12) քննարկում և հաստատում է Կենտրոնի եկամուտների ու ծախսերի տարեկան նախահաշիվը և դրա փոփոխությունները,
13) իրականացնում է սույն կանոնադրությունից բխող՝ Կենտրոնի ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեության հետ կապված այլ լիազորություններ:

3. ԳԱԱ ԳԿՄԿ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ

3.1. Համաձայն ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ կանոնադրության 27-րդ կետի՝ ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի կազմը և անդամների թիվը, տնօրենի առաջարկով, հաստատում է ՀՀ ԳԱԱ նախագահությունը (տնօրենի ընտրությունից հետո երկամսյա ժամկետում):
3.2. Ի պաշտոնե Կենտրոնի գիտական խորհրդի անդամներ են տնօրենը, փոխտնօրենը, Կենտրոնի գիտական քարտուղարը: Հիմնարկի գիտական քարտուղարը նաև գիտական խորհրդի գիտական քարտուղարն է:
3.3. Կենտրոնի գիտական խորհրդի կազմում ընդգրկվում են Կենտրոնի համապատասխան ստորաբաժանումների ղեկավարները, ինչպես նաև այլ անդամներ՝ հիմնարկի կանոնադրությանը համապատասխան:
3.4. Կենտրոնի ի պաշտոնե և հրավիրված անդամների թիվը չպետք է գերազանցի գիտական խորհրդի անդամների թվի մեկ երրորդը:

4. ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ԵՎ ՆԻՍՏԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

4.1. Կենտրոնի գիտական խորհրդի իրավասությունն իրականացվում է հերթական և արտահերթ նիստերի միջոցով:
4.2. Կենտրոնի գիտական խորհրդի հերթական նիստերը որպես կանոն հրավիրվում են ամիսը մեկ անգամ: ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի արտահերթ նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության՝ տնօրենի կողմից կամ գիտական խորհրդի անդամների մեկ երրորդի գրավոր պահանջով:
4.3. Կենտրոնի գիտական խորհրդի նիստերը նախապատրաստում են տնօրենը և գիտական քարտուղարը:
4.4. Գիտական խորհրդի անդամներին նիստի հրավիրման և դրա օրակարգի մասին տեղեկացվում է ողջամիտ ժամկետում բանավոր կամ գրավոր ձևով:
4.5. Գիտական խորհրդի նիստերը կարող են անցկացվել տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության այլ միջոցների կիրառմամբ, ինչպես նաև հարցման միջոցով:

5. ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԵՐԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Արտահերթ նիստը գումարելու՝ տնօրենին ներկայացված գրավոր պահանջը պետք է ձևակերպի գիտական խորհրդի օրակարգում առաջարկվող հարցերը, դրանց բարձրացման շարժառիթները՝ արտահերթ նիստը պահանջող գիտական խորհրդի անդամների ստորագրություններով:

5.2. Կենտրոնի գիտական խորհրդի անդամների մեկ երրորդի գրավոր պահանջը ստանալու պահից 7 օրվա ընթացքում Կենտրոնի տնօրենը պետք է ընդունի ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի նիստ գումարելու կամ գումարումը մերժելու մասին որոշում:

5.3. Կենտրոնի տնօրենը կայացնում է հրաման գիտական խորհրդի նիստի գումարումը մերժելու մասին, եթե

1) պահպանված չէ արտահերթ նիստը գումարելու պահանջ ներկայացնելու կարգը,
2) արտահերթ նիստի օրակարգի համար առաջարկված հարցերից ոչ մեկը վերապահված չէ գիտական խորհրդի իրավասությանը,
3) արտահերթ նիստի օրակարգի համար առաջարկված հարցը չի համապատասխանում ՀՀ օրենսդրության պահանջներին:

5.4. Կենտրոնի գիտական խորհրդի արտահերթ նիստի գումարումը մերժելու մասին գրավոր ծանուցումն ուղարկվում է գիտական խորհրդի նիստի գումարումը պահանջող անդամներին:

6. ԳԱԱ ԳԿՄԿ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

6.1. Կենտրոնի գիտական խորհրդի նիստերում քարտուղարում է ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական քարտուղարը: Գիտական քարտուղարը գրանցում է նիստին մասնակցող գիտական խորհրդի անդամներին, կազմում է գիտական խորհրդի նիստերի արձանագրությունը, հաշվում է ձայների թիվը:

7. ԳԱԱ ԳԿՄԿ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ ՔՎԵԱԿԱԶՄԸ

7.1 Կենտրոնի գիտական խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է խորհրդի անդամների առնվազն երկու երրորդը:

7.2 Կենտրոնի գիտական խորհրդի անդամների ներկայությունը գրանցում է գիտական քարտուղարը՝ նիստը սկսելուց առաջ: Քվորումը չապահովելու դեպքում տնօրենի որոշմամբ կարող է երկարաձգվել գրանցումը՝ մինչև քվորումի ապահովումը կամ հետաձգվել նիստը:

7.3 Կենտրոնի գիտական խորհրդի քվեակազմի բացակայության պատճառով հետաձգված նիստը՝ նույն օրակարգով, գումարվում է ընդհանուր կարգով:

8. ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

8.1. ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրենը, բացելով Կենտրոնի գիտական խորհրդի նիստը, հայտարարում է քվեակազմի առկայությունը և քվեարկության է դնում օրակարգը:

8.2. Կենտրոնի գիտական խորհրդի անդամները կարող են օրակարգի համար առաջարկել հարցեր, որոնք դրվում են քվեարկության:

8.3. Օրակարգի հարցերի քննարկման կարգը, հիմնական և հարակից զեկույցների, ելույթների տևողությունը որոշում է գիտական խորհուրդը՝ նախագահի առաջարկությամբ:

9. ԳԱԱ ԳԿՄԿ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

9.1. Կենտրոնի գիտական խորհուրդը իրավասու է ընդունելու որոշումներ, եթե նիստին մասնակցում է նրա կազմի առնվազն երկու երրորդը: Գիտական խորհրդի որոշումն ընդունված է, եթե դրա օգտին քվեարկել է ներկաների կեսից ավելին: Որոշումն ընդունվում է բաց քվեարկությամբ, եթե գիտական խորհուրդը որոշում չի ընդունում փակ գաղտնի քվեարկություն կատարելու մասին:

9.2.Պաշտոնների զբաղեցման, գիտամանկավարժական պաշտոնների տեղակալման, ամբիոնների վարիչների ընտրության և այլ մրցույթների քվեարկությունը կատարվում է փակ, գաղտնի:

9.3. Փակ, գաղտնի քվեարկության համար նախատեսված քվեաթերթիկները պատրաստում է գիտական քարտուղարը՝ նախքան գիտական խորհրդի նիստը:

9.4. Քվեաթերթիկում նշվում է քվեարկության դրվող հարցի բովանդակությունը, քվեարկության հնարավոր տարբերակները («կողմ», «դեմ»):

9.5. Փակ, գաղտնի քվեարկությունը կազմակերպելու համար կազմվում է հաշվիչ հանձնաժողով՝ գիտական խորհրդի նախագահի առաջարկությամբ՝ ըստ գիտական խորհրդի ցուցակային կազմի:

9.6. Քվեարկությունից առաջ հաշվիչ հանձնաժողովի նախագահը, ըստ անհրաժեշտության, գիտական խորհրդին տեղեկատվություն է տրամադրում քվեարկության անցկացման և քվեաթերթիկի լրացման կարգի վերաբերյալ:

9.7. Քվեաթերթիկը վավերական է, եթե դրանում քվեարկվել է միայն մեկ տարբերակով:

9.8. Հաշվիչ հանձնաժողովը առանձին սենյակում բացում է քվեատուփը և իրականացնում է քվեարկության արդյունքների հաշվառում:

9.9. Ձայները հաշվելու արդյունքները ձևակերպվում են հաշվիչ հանձնաժողովի արձանագրության մեջ՝ ստորագրված բոլոր անդամների կողմից, և հայտարարվում են գիտական խորհրդի նիստում՝ հաստատման համար:

10. ԳԱԱ ԳԿՄԿ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

10.1. Կենտրոնի գիտական խորհրդի որոշումները կենսագործվում են ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրենի հրամաններով:

10.2. Կենտրոնի տնօրենն իրավունք ունի կասեցնելու գիտական խորհրդի այն որոշումները, որոնք չեն բխում նրա իրավասությունից, հակասում են ՀՀ գործող օրենսդրությանը, ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ կանոնադրությանը, սույն կանոնակարգին և ներքին այլ ակտերին:

10.3. Կենտրոնի գիտական խորհրդի կասեցված որոշումները ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրենը գիտական խորհրդի նույն կամ այլ նիստում դնում է վերաքննարկման և վերաքվեարկության:

10.4. Կենտրոնի գիտական խորհրդի որոշումների կասեցման մասին տնօրենի հրամանները պետք է լինեն պատճառաբանված՝ մատնանշելով, թե ՀՀ օրենսդրության կամ ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ կանոնադրության, սույն կանոնակարգի և ներքին այլ ակտերի որ դրույթներն են խախտվել:

10.5. Եթե վերաքվեարկության միջոցով գիտական խորհուրդը ձայների երկու երրորդով վերահաստատում է իր որոշումը, տնօրենը ներկայացնում է ծագած խնդիրը ՀՀ ԳԱԱ նախագահության քննարկմանը:

11. ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

11.1. Կենտրոնի գիտական խորհրդի արձանագրությունը, կազմում է ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական քարտուղարը գիտական խորհրդի նիստի ավարտից հետո 3 օրվա ընթացքում:

11.2. Արձանագրությունը ստորագրում են Կենտրոնի տնօրենը և գիտական քարտուղարը:

11.3. Արձանագրության մեջ պետք է նշվեն նիստի անցկացման ժամանակը, քվեակազմը, նախագահը, գիտական քարտուղարը, նիստի օրակարգը, ելույթների հիմնական դրույթները, քվեարկության դրված հարցերը, քվեարկության արդյունքները, ընդունված որոշումները:

12. ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ ԿԻՑ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

12.1. Կենտրոնի գիտական խորհրդի որոշմամբ՝ անհրաժեշտության դեպքում ստեղծվում են համապատասխան հանձնաժողովներ (մրցույթային, որակի ապահովման, ուսումնական վարձի փոխհատուցման նպաստների հատկացման, կանոնակարգերի մշակման և այլն), որոնց կարգավիճակը, կառուցվածքը, իրավասությունը, աշխատանքի կարգը սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ, ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ կանոնադրությամբ և սույն կանոնակարգով:

12.2. Կենտրոնի հանձնաժողովների խնդիրն է իրենց ոլորտի հարցերի ուսումնասիրումը, նախապատրաստումը և դրանք առաջարկության ձևով գիտական խորհրդին ներկայացնելը:

12.3. Կենտրոնի հանձնաժողովների կառուցվածքը և կազմը որոշում է գիտական խորհուրդը:

12.4. Կենտրոնի հանձնաժողովներն իրենց ոլորտին վերաբերող հարցեր քննարկում են ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի և տնօրենի հանձնարարությամբ:

12.5. Կենտրոնի հանձնաժողովն իրավունք ունի կառավարման մարմիններից, կառուցվածքային ստորաբաժանումներից և պաշտոնատար անձանցից ստանալ անհրաժեշտ փաստաթղթեր և նյութեր:

12.6. Կենտրոնի հանձնաժողովների նիստերն իրավազոր են հանձնաժողովի անդամների առնվազն կեսի ներկայության դեպքում:

12.7. Կենտրոնի հանձնաժողովների նիստերն արձանագրվում են:

12.8. Կենտրոնի հանձնաժողովի փաստաթղթերը և եզրակացությունները հաստատվում են նիստին ներկա գտնվող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

12.9. Ձայների հավասարության դեպքում վճռորոշ է հանձնաժողովի նախագահի ձայնը:

12.10. Կենտրոնի հանձնաժողովի անդամներն իրավունք ունեն հանձնաժողովի արձանագրության մեջ մտցնել հատուկ կարծիք և այդ մասին տեղյակ պահել ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդին: